ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ. «ԱԶԳԱՅԻՆԻ»* ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ(1988-1991թթ.)*

Աննա Մկրտչյան

Բանալի բառեր՝ ղարաբաղյան շարժում, ազգային, արժեքներ և գաղափարներ, ազգայնականություն, ինքնություն, քարոզչություն, տեղեկատվական հակազդեցություն:

1988 թվականին սկիզբ առած ղարաբաղյան շարժումը, որը բովանդակությամբ խիստ ազգային էր, իսկ ձևով՝ դեմոկրատական, զարգացման նոր հեռանկարներ էր բացում հայաստանյան մամուլի առաջ: Մասնավորապես՝ 1988-1991թթ. հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժերով պայմանավորված՝ լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտակի ձևափոխվեց: Թեև այն կրում էր խորհրդային գաղափարախոսության կնիքը, բայց ազատականացման քայլերն ընդգծված բնույթ ունեին: Այդ ժամանակաշրջանի հայաստանյան մամուլը հասկանալիորեն ուղղված էր ղարաբաղյան շարժմանը՝ իր բոլոր դրսևորումներով: Ցանկացած ոլորտի առնչվող հրապարակում տարբեր թելերով կապվում էր Ղարաբաղին:

Այսպես՝ Ղարաբաղի հիմնախնդիրը սկզբնական շրջանում ներկայացվում էր բացառապես վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով, ինչը դրսևորվում էր պաշտոնական լրահոսում, Խորհրդային իշխանության ուղերձներում, համապատասխան որոշումներում, ժողովուրդների բարեկամության քարոզչությունն իրականացնելիս, ինչպես նաև ռուսական մամուլից հաճախակի արված արտատպումներում: Զարգացող իրադարձություններով թելադրված՝ մամուլում նկատվում էին հուսահատական տրամադրություններ, ընդուպ մինչև հոգեբանական անկում, որին կարճ ժամանակ անց հաջորդում էր ղարաբաղյան խնդրին շուտափույթ լուծումներ գտնելու հրամայականը և խաղաղության հաստատման հետ կապվող հույսերը, զուգահեռ տարվում էր իրավական պայքար: Քիչ չէին նաև տեղեկատվական հարթությունում առաջացած խնդիրները: Այս համատեքստում կարևոր ուղղություն էր որդեգրել մամուլը, որը թեև դեռևս խորհրդային էր, բայց մեծ ջանքեր էր գործադրում իր հրապարակումներում «ազգայինի» վերաիմաստավորման ուղղությամբ: Ընդ որում՝ «ազգայինը» նույնանում էր ոչ թե պահպանողականի, այլ առաջադիմականի, եթե չասենք՝ հեղափոխականի հետ: Առանձնահատուկ շեշտադրում էր արվում հայոց ազգային գաղափարախոսության՝ որպես հայ էթնոսի ինքնապահպանման բնազդ, ազգային ինքնագիտակցության նախասկիզբ:

Ազգային գաղափարախոսությունը տարբեր ժողովուրդների մոտ պատմության թելադրանքով արտահայտման տարբեր ձևեր ունի և պայքարի առաջին պլանում՝ տարբեր հիմնախնդիրներ (ազգի գոյապահպանումից մինչև հայրենիքի ազատագրության հարց, լեզվի, մշակույթի, կրոնի պահպանում և այլն): Ազգային գաղափարախոսության հիմնախնդիրը ժողովրդի գոյապահպանումն է, նրա ազատ, անվտանգ, բնականոն ու բազմակողմանի զարգացումը: Հետևաբար, ժողովուրդները, որպես կանոն, ապրում և պայ-

---

* «Ազգային» եզրույթը հոդվածում դիտարկվել է իբրև հղացք:

* Հոդվածն ընդունվել է 09.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.թ., դոցենտ՝ Ն.Մարտիրոսյանը:

քարում են ազգային գաղափարախոսության վերհանած հիմնախնդիրների լուծման համար[*]*: Այս ամենը, անշուշտ, արտացոլվում էր մամուլում:*

Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին «ազգայինի» գաղափարական իմաստավորումը հստակ նպատակ էր հետապնդում. նախ՝ այն անկյունաքարային նշանակություն ուներ սկիզբ առած տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության, ապա՝ այն հզոր վահան կարող էր լինել հասարակության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Մամուլը (լրագրողների հետ նաև մտավորականները, որոնք հանդես էին գալիս հրապարակախոսական հոդվածներով), ըստ էության, ստանձնել էր հանրության արժեքային-գաղափարական դաշտը ձևավորողի բարդ ու պատասխանատու դերը: Դժվար է միանշանակ պնդել, արդյոք մամուլը ծրագրված էր գործում, թե ամեն ինչ արվում էր ակամայից՝ ենթագիտակցական մակարդակի վրա, բայց հստակ է, որ մամուլում ուրվագծվում էին ազգային արժեքների տարածման մի քանի ընդհանուր միտումներ: Դրանցից են՝

- ✓ արժեքների ու գաղափարների իրադարձային ներկայացում,
- ✓ արժեք-գաղափարների մակերեսային շրջանառություն,
- ✓ հանրային ազդեցության զգայական ներգործության մակարդակ[*]:

Հստակ համոզմունք ունենալով, որ հեռանկարում խնդիրների հնարավոր լուծման գործում հոգեբանական պատրաստվածությունը հսկայական նշանակություն կարող է ունենալ՝ մամուլը դարձավ արժեքներ, գաղափարներ տարածող միջավայր: Խիստ կարևորելով տեղեկատվական-հոգեբանական գործոնը՝ հրապարակումներն աչքի էին ընկնում հստակ ուղերձներով՝ առավելապես հանրության մեջ «ազգայինի» տեղի և դերի համար տարվող պայքարի շեշտադրմամբ [1]: Ընդ որում այս համատեքստում հարկ է դիտարկել, որ «ազգայինի» ընդգծված ներկայացումը հաճախ հայկական կողմի նախաձեռնությունը չէր, այլ ադրբեջանական կողմի մշակած տեղեկատվական գործողությունների[*] *պատասխանը:*

Գիտակցելով տեղեկատվական հարձակումներին հակազդելու կարևորությունը՝ հայաստանյան մամուլը «ազգայինը» շեշտադրում էր՝ իբրև պատասխան ադրբեջանական կողմի ապատեղեկատվությանը և զեղծարարությանը Արցախում հայերի բնակեցման, պատմության և կարգավիճակի շուրջ: Մեկ այլ առիթով մամուլը արձագանքում էր հայերի էթնիկ նկարագրի շուրջ բացասական որակումներ պարունակող պատմական վավերագրերին: «Ազգայինի» վերաիմաստավորումը հրամայական էր դառնում հատկապես այն պահերին, երբ հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելու կամ ադրբեջանականացնելու փորձեր էին արվում[2]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադրբեջանական քարոզչության կարևորագույն բաղադրիչներից են հայ ժողովրդի պատմության զեղծումները, պատմական և նյութական, մշակութային արժեքների ոչնչացումը, դրանց նախապատմության կեղծումը,

---

[*] Արդի ժամանակաշրջանում փորձագետները պնդում են, որ ազգային գաղափարախոսությունը հստակ գործիքային նշանակություն ունի տեղեկատվական անվտանգության տեսանկյունից:

[*] Նմանատիպ տեսակետներ առկա են նաև մի շարք փորձագետների մոտեցումներն ընդհանրացնող հոդվածում: «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 12, 2012թ., Մանուսյան Ս., «Հայկական մեդիաների դերը հանրության արժեքային-գաղափարական դաշտի ձևավորման մեջ»:

[*] Այդ գործողությունները ուղեկցվում էին հոգեբանական ներգործության մեթոդների կիրառմամբ, ընդ որում՝ հոգեբանական գործողություններում հատուկ կարևորություն է ձեռք բերում հոգևոր և բարոյական արժեքների, պետական, ազգային և պատմական խորհրդանիշերի արժեզրկումը:

«արհեստածին և գիտականորեն չհիմնավորված տեսակետների առաջքաշումը և դրանց հիմնավորման համար այլազգի վարձու հեղինակների ներգրավումը՝[3], հայ մտավորականները դարաբաղյան շարժման սկզբից ի վեր առանձնահատուկ շեշտադրում են հենց Արցախի պատմական պատկանելության հարցը: Թերևս սրանով պայմանավորված՝ մամուլում սկսվեցին «ազգայինի» վերահիմաստավորման առաջին և լուրջ փորձերը: Դրանք դրսևորվում էին հայոց պատմության անցյալի հերոսների և նրանց գործի արժևորմամբ (առանց տեղեկատվական որևէ առիթի՝ հայ մտավորականները 1988թ-ին խոսեցին Սարդարապատի հերոսամարտի մասին), հայկական հուշարձանների ու նաև դրանց վտանգված գոյության հարցի, հայկականության գաղափարի շեշտադրմամբ. «Անգնահատելի է հայ հերոսների ներդրումը հայի լինելիության գործում»[4]:

Ազգայնականության ցայտուն դրսևորումները մեզանում ի հայտ եկան հենց արցախյան ազատագրական շարժման հողի վրա, ԽՍՀՄ փլուզման և անկախացման փուլում: Ղարաբաղյան շարժման մեկնարկին հաջորդող իրադարձությունները պահանջատեր հայության համար պայքարի նոր ուղղություններ էին ուրվագծում: Ազգայինն աստիճանաբար գերիշխող է դառնում կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած մշակութապահպանումից մինչև անցյալի հերոսների արժևորում: Հայաստանյան մամուլում «ազգայինի» վերահիմաստավորումն ակնհայտորեն դրսևորվում էր մի քանի ուղղություններում.

- Հայոց լեզվի անաղարտության համար պայքար և հայախոսության հաղթանակ,
- Ազգային մշակույթի պահպանման հարցը՝ գերխնդիր,
- Պետական տոների և խորհրդանիշերի վերականգնում,
- Պատմական դեպքերի և դեմքերի արժևորում (Գարեգին Նժդեհ, Հայոց ցեղասպանություն, Սևրի պայմանագիր և այլն):

1989-ի ապրիլին արձանագրվեց առաջին զիջումը իշխանությունների կողմից՝ պայմանավորված ամբողջ Խորհրդային Միությունում ծայր առած ժողովրդական հզոր շարժման ալիքի ճնշման հետ: Իշխանությունները տեղի տվեցին և հանուն հայոց լեզվի անաղարտության և հայախոսության՝ շարժման մարտիկներն անդրանիկ հաղթանակն արձանագրեցին, երբ «սովետ» բառը փոխարինվեց «խորհուրդ» բառով[5]: Ըստ «Արմենպրես»-ի հաղորդագրության՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն նպատակահարմար համարեց ընդունել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի առաջարկությունը՝ վերականգնել հայերեն խորհուրդ բառի՝ որպես պետական վարչական տերմինի գործածությունը: Սովետ ու նրանից կազմված սովետական և այլ բառերի փոխարեն սկսեց գործածվել խորհուրդ, խորհրդային և այլ բառաձևերը[6]: Համապատասխան փոփոխության ենթարկվեցին այս բառն ունեցող մամուլի օրգանների անուններն ու ենթավերնագրերը: Օրինակ՝ «Երեկոյան Երևան»-ը ապրիլի 13-ից համարվեց ոչ թե սովետի, այլ ՀԿԿ Երևանի Քաղկոմի և ժողովրդական դեպուտատների քաղաքային խորհրդի օրգան[7], իսկ «Սովետական Հայաստան»-ը՝ «Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Մինիստրների խորհրդի օրգան»: Բացի այդ՝ ուշագրավ էր այն փաստը, որ համազգային զարթոնքն ուղեկցվում էր մի հոսանքով՝ այն է վերադարձ դեպի դասական ուղղագրությանը: Այսինքն՝ դասական ուղղագրության վերադարձի շարժումը քաղաքական, հակախորհրդային բովանդակություն ուներ: Համազգային շարժման առաջին տարիներին շատ

պարբերականներ լույս էին տեսնում հենց դասական ուղղագրությամբ[*]*: Սա խորհրդային կարգերի դեմ բողոքի արտահայտության յուրատեսակ ձև էր[8]:*

1989-ի կեսերին պաշտոնական շրջանակների կողմից ազատ մամուլի նկատմամբ որոշ հանդուրժողականություն դրսևորվեց. առաջին անգամ Խորհրդային Հայաստանի կրպակներում հայտնվեցին ԼՂԻՄ «Խորհրդային Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» պաշտոնաթերթերը, որոնք մեծ ժողովրդականություն էին վայելում, քանի որ ներկայացնում էին ԼՂԻՄ-ի բնակչության և ընդհանրապես հայության ձգտումները[9]: Հայաստանյան մամուլում էլ սկսվեց դրական տեղաշարժեր նկատվել: Ընդլայնվեց հրապարակումների թեմատիկան, որոշակի զարգացում ապրեցին լրագրային ժանրերը, թերթերում հայտնվեցին երկարաշունչ հրապարակումների ձանձրույթը մեղմող լուսանկարներ, նվազեցին անստորագիր նյութերը, մամուլի էջերը դարձան նաև տարբեր մասնագիտությունների տեր անձանց խոսափող, ակտիվացավ ընթերցողների դերը, որոնք փորձում էին մշտապես կապի մեջ լինել մամուլի հետ: Այսպիսով՝ լրատվական բազմազանությանն ուղղված ջանքերը սկսեցին արդյունք տալ:

Ազգային թեմատիկան գերիշխող դարձավ կյանքի բոլոր ոլորտներում, ինչը, բնականաբար, ակնհայտորեն դրսևորվեց նաև մամուլում: Նախ՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշեց 1918թ. մայիսի 28-ը ճանաչել Հայկական պետության վերականգնման օր, իսկ եռագույն դրոշը համարել հայկական ազգային խորհրդանիշ[10] և այդ կապակցությամբ Երևանում միտինգ անցկացվեց, որտեղ, սակայն, հնչեցին ելույթներ, որոնց մեջ կարմիր թելի պես անցնում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի արդարացի քաղաքական լուծման պահանջները[11], ապա ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում ազգամիջյան հարցին անդրադարձավ նաև Գորբաչովը՝ նկատելով, որ «յուրաքանչյուր մարդ, ինչ ազգության էլ որ պատկանի և որտեղ էլ որ նա բնակվի, իրեն (մենք պետք է անենք) պետք է լավ զգա, թե՛ Ռուսաստանում, թե՛ Մերձբալթիկայում և թե՛ Անդրկովկասում՝ ամենուր...»[12]: Թեև Գորբաչովն իր զեկուցման մեջ ազգային հարցի սրության և ազգամիջյան հարաբերությունների բարդության մասին խոսեց ընդհանուր գծերով, սակայն մամուլն իր հերթին ընդգծեց խնդրի լուծման հրատապությունը՝ նշելով, որ «այդ հարցը պահանջում է անհապաղ, արդարացի և արմատական լուծում, քանզի ժողովուրդների բարեկամությունը կարող է ամրապնդվել ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի հաղթանակով»[13]: Նույն համագումարում ազգամիջյան հարաբերությունների խնդրի մասին խոսելիս Ս. Հարությունյանն անդրադարձավ ստեղծված իրավիճակին՝ այն պատկերավոր բնորոշելով «ազգային ստրես»: Իր ելույթում նա անդրադարձավ հայ ժողովրդի համար երկու «ցավոտ կետերին»՝ Արևմտյան Հայաստանի տարածքում կատարված ցեղասպանությանը և Լեռնային Ղարաբաղի խնդրին[14]:

Հայաստանյան մամուլում «ազգայինի» վերահմաստավորման յուրօրինակ շրջան սկսվեց 1989թ. տարեվերջին: Մամուլը նկատելիորեն փոխեց իր դիմագիծը, «ազգայինը» գերիշխող դարձավ մեդիատեքստում: Մամուլում հայտնվեցին հրապարակումներ Արամ Մանուկյանի[15], Գարեգին Նժդեհի[16], Եղիշե Չարենցի[17], Արամ Երկանյանի, Հայոց ցեղասպանության[18], անգամ 1920թ. ստորագրված Սևրի պայմանագրի մասին[19]: Ընթերցողը լուրեր էր ստանում մշակութային և հոգևոր կյանքի մասին (այդ շրջանում վերականգնման աշխատանքներ էին ընթանում Ասկերանի շրջանի Ամենափրկիչ եկեղեցում[20], Շուշին հիշատակվում էր իբրև հայ թատերական կյանքի օր-

[*] Առաջինը դասական ուղղագրությունը որդեգրեց «Անկախություն»ը՝ Ռ. Համբարձումյանի խմբագրության շրջանում (1988-1989թթ.):

րան[21] և այլն): Փաստորեն, մամուլն իր հերթին փորձեց պայքար սկսել, «պայքար մինչև… միացում»[22]: Որ պայքարը վճռական փուլ էր թևակոխել, շարժումն անշրջելի էր, իսկ մամուլի դերը բացառիկ կարևոր, վկայում էին ժանրային բազմազանությամբ ու ինքնատիպ լուսանկարներով աչքի ընկնող համարները. բռունցքված ձեռքն ամենահաճախ հանդիպող լուսանկարներից էր[23]: Այս ամենին զուգահեռ հայ իրականությունում, մասնավորապես՝ մամուլում, հատկապես 20-րդ դարի 80-ականներին միտում է նկատվում հայացնելու արդեն իսկ ընդունված բազմաթիվ փոխառություններ, որոնց համար մեր գրական լեզուն իր բառակազմական լայն հնարավորությունների շնորհիվ ստեղծում է ազգային համարժեք ձևեր, ինչպես՝ ավանդույթ, մշակույթ, զբոսաշրջիկ, հրասայլ, գործընթաց և այլն[24]:

Ընդհանուր առմամբ դարաբաղյան շարժումն իր բոլոր դրսևորումներով աստիճանաբար սկսեց նոր շերտեր վերհանել: Ի վերջո՝ այդ կերպ նաև դարաբաղյան շարժումը սկսեց բացահայտվել որպես «20-րդ դարի հայ ինքնության հանրագումարային տարրեր պարունակող հասարակական երևույթ»[25]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Երեկոյան Երևան», 26 սեպտեմբերի, 1989:
2. Դեմոյան Հ., «Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ Ադրբեջանի քարոզչության նախապատմությունը և հակահայ քարոզչության ելակետերը», «Տարածաշրջան» տեղեկագրի հատուկ թողարկում (Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ), Եր., 2005:
3. Նույն տեղում:
4. «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր), Պրակ ԺԲ, էջ 15, Եր., 2012:
5. Եազըճեան Գ., «Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը», Անթիլիաս, 2004, էջ 85:
6. «Երեկոյան Երևան», 12 ապրիլի, 1989:
7. Նույն տեղում, 13 ապրիլի, 1989:
8. Եազըճեան Գ., «Հայաստանի 1985-1991թթ. պարբերական մամուլը», Անթիլիաս, 2004, էջ 61:
9. Սարգսյան Ֆ. «Կյանքի դասերը», Եր., 2000, էջ 184:
10. «Խորհրդային Հայաստան», 27 մայիսի, 1989:
11. Նույն տեղում, 30 մայիսի, 1989:
12. Նույն տեղում, 27 մայիսի, 1989:
13. «Երեկոյան Երևան», 14 հունիսի, 1989:
14. «Խորհրդային Հայաստան», 1 հունիսի, 1989:
15. «Ավանգարդ» 5 նոյեմբերի, 1989, «Խորհրդային Հայաստան», 9 օգոստոսի, 1989:
16. Նույն տեղում, 13 նոյեմբերի, 1989:
17. Նույն տեղում, 17 նոյեմբերի, 1989:
18. «Խորհրդային Հայաստան», 15 ապրիլի, 1990:
19. «Ավանգարդ» 3 դեկտեմբերի, 1989:
20. «Խորհրդային Հայաստան», 9 օգոստոսի, 1989:
21. Նույն տեղում, 17 փետրվարի, 1990:
22. Նույն տեղում, 10 նոյեմբերի, 1989:
23. «Ավանգարդ» 19 նոյեմբերի, 1989:

24.Եզեկյան Լ., «Ոճագիտության ուղեցույց», Եր., 2007, էջ 24:
25.Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը, հատոր 1, Եր., 2009, էջ 25:\

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ղարաբաղյան շարժում. «Ազգայինի» վերաիմաստավորման հրամայականը հայաստանյան մամուլում(1988-1991թթ.)
Աննա Մկրտչյան

1988 թվականին սկիզբ առած ղարաբաղյան շարժումը, որը բովանդակությամբ խիստ ազգային էր, իսկ ձևով՝ դեմոկրատական, զարգացման նոր հեռանկարներ էր բացում հայաստանյան մամուլի առաջ: Մասնավորապես՝ ղարաբաղյան շարժման առաջին տարիներին մամուլում «ազգայինի» գաղափարական իմաստավորումը հստակ նպատակ էր հետապնդում. նախ՝ այն անկյունաքարային նշանակություն ուներ սկիզբ առած տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության, ապա՝ այն հզոր վահան կարող էր լինել հասարակության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Մամուլը (լրագրողների հետ նաև մտավորականները, որոնք հանդես էին գալիս հրապարակախոսական հոդվածներով), ըստ էության, ստանձնել էր հանրության արժեքային-գաղափարական դաշտը ձևավորողի բարդ ու պատասխանատու դերը:

РЕЗЮМЕ
Карабахское движение: переосмысление понятия “национальный” в армянской прессе (1988 – 1991гг)
Анна Мкртчян

Ключевые слова: *Карабахское движение, национальные ценности и идеи, национализм, идентичность, пропаганда, взаимовлияние информации.*

Карабахское движение, которое началось в 1988 году, своим содержанием было строго национальным, а по форме демократическим и открывало новые перспективы для армянской прессы. В частности, карабахское движение в первые годы в прессе преследовало четкую цель – осмыслить идеологическое понимание “национального”: во-первых, оно имело первоначальное значение в информационной войне против азербайджано-турецкой фальсификации, а во-вторых, оно могло стать мощным щитом для патриотического воспитания общества. Пресса (журналисты а также интеллигенция, выступающая со своими публицистическими статьями) взяла на себя сложную и ответственную роль – преобразование круга ценностей и идеологии общества.

SUMMARY

The Karabakh Movement: the Reevaluation of the concept "national" in the Armenian press (1988–1991)

Anna Mkrtchyan

Keywords: *the Karabakh movement, national values and ideas, nationalism, identity, promotion, informational cooperation.*

The Karabakh movement, which started in 1988 was strongly national in its content, but also democratic in form. It opened new perspectives for the Armenian press. In particular, in the early years of the Karabakh movement the ideological interpretation of the concept «national» had its main goal: firstly, it had an important role in the information war against the Turkish-Azerbaijan falsification, secondly, it could be a powerful shield for patriotic education of the public. The media (both journalists and intellectuals, who also wrote articles) had difficult and responsible role in shaping the field of the values and ideas.